

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Ավտոապահովագրողների
Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի
30/04/2019թ. թիվ 1-Լ որոշմամբ
Փոփոխված է
26/10/2021թ թիվ 7-Լ որոշմամբ
~~04/2024թ թիվ 1-Լ որոշմամբ~~

Հայաստանի Ավտոապահովագրողների
Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի
նախագահ

_____ Արմեն Նուրբեկյան
Երեջյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում
« » _____ի 2024թ.

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Մարտին Գալստյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ
(ԱՊՊԱ ՈԼՈՐՏԻՐԻՄ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԵՎ ԱՊԱՀՐՎԱԳՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ)

1. Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոն (այսուհետ՝ Բյուրո) ստեղծում և վարում է ԱՊՊԱ համակարգում հրապարակվող և ապահովագրական ընկերությունների և (կամ) ՀՀ կենտրոնական բանկի ներքին օգտագործման համար տրամադրվող վիճակագրության մատրիցա (այսուհետ՝ մատրիցա)՝ սույն կանոնների **Հավելված 1-ով** սահմանված ձևով և բովանդակությամբ, որը հրապարակվում է Բյուրոյի պաշտոնական ինտերնետային կայքի «Իրավական ակտեր» բաժնի «Բյուրոյի կանոններ» ենթաբաժնում: Ընդ որում՝ մատրիցայի «Ընթացիկ հասանելիություն» անվանումով սյունակներում արտացոլված տեղեկատվությունն ըստ անհրաժեշտության պարբերաբար թարմացվում են Բյուրոյի կողմից՝ հիմք ընդունելով տվյալ պահին Բյուրոյի կողմից համապատասխան տվյալի ստացման տեխնիկական հնարավորությունները, և մատրիցայի թարմացված տարբերակը փոփոխության նույն աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է Բյուրոյի կայքի՝ սույն կետում նշված միևնույն մասում:

2. Բյուրոն ամսական պարբերականությամբ՝ մինչև յուրաքանչյուր ամսվանը հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը իր ինտերնետային կայքի «Վիճակագրություն» բաժնում հրապարակում է տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև հաշվետու ժամանակահատվածի վերջին օրն ընկած ժամանակահատվածի ընթացքում ԱՊՊԱ ոլորտում իրականացված գործառնությունների վերաբերյալ վիճակագրական հաշվետվություն՝ սույն կանոնների համապատասխանաբար **Հավելված 2-ով, ~~և~~ Հավելված 3-ով և Հավելված 4-ով**՝ սահմանված ձևերով և բովանդակությամբ (այսուհետ՝ հրապարակվող հաշվետվություններ):

3. Հրապարակվող հաշվետվություններում արտացոլվող տեղեկատվության ստացման համար Բյուրոն առաջնահերթ օգտվում է ԱՊՊԱ միասնական տեղեկատվական համակարգում և այլ էլեկտրոնային տեղեկատվական համակարգերում (այսուհետ՝ Միասնական տեղեկատվական համակարգ) առկա համապատասխան տեղեկատվության աղբյուրներից, եթե դրանք ամբողջապես արտացոլում են (կարգավորումների համաձայն պետք է արտացոլեն) հրապարակվող տվյալի համար հիմք հանդիսացող տեղեկությունները: Հրապարակվող հաշվետվությունների մեջ ներառված, սակայն Միասնական տեղեկատվական համակարգում բացակայող տվյալները Բյուրոն ստանում է իր անդամ ապահովագրական ընկերություններից (այսուհետ՝ ընկերություններ)՝ համապատասխան հաշվետվությունների ստացման միջոցով: Ընդ որում՝

1) այդ հաշվետվությունների ձևը, ինչպես նաև դրանց լրացման հրահանգը հաստատվում և պարբերաբար փոփոխվում է Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից՝ հաշվի առնելով սույն կետով նախատեսված Միասնական տեղեկատվական համակարգից տվյալների ստացման ընթացիկ հնարավորությունները,

2) ապահովագրական ընկերությունների համար հաշվետվությունների ձևերը կիրառելի են (գործողության մեջ են մտնում) Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից ապահովագրական ընկերություններին ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետներում,

3) ապահովագրական ընկերությունները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար հաշվետվությունը Բյուրոյին ուղարկել մինչև տվյալ ամսվանը հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը՝ «xls» կամ «xlsx» ձևաչափով՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով

կամ ընկերության իրավասու էլեկտրոնային հասցեից Բյուրոյի իրավասու էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով: Ընդ որում, ներկայացվող ֆայլերի անունները պետք կազմված լինեն հետևյալ սկզբունքով՝ «APPA01XXYYMM», որտեղ՝ XX-ը ապահովագրական ընկերության ԱՊՊԱ վկայագրերի սերիան է, YY-ը՝ հաշվետու տարին (երկուական սիմվոլով), MM-ը՝ հաշվետու ամիսը (երկուական սիմվոլով):

4. Մատրիցայում արտացոլված տեղեկատվության՝ ապահովագրական ընկերություններին (ընկերությունների կողմից առարկություններ չներկայացվելու դեպքերում) և (կամ) ՀՀ կենտրոնական բանկին մեկանգամյա տրամադրման համար (համապատասխան պահանջը կամ անհրաժեշտությունն առաջանալու դեպքերում) Բյուրոյի գործադիր տնօրենը կարող է հաստատել նաև մեկանգամյա հաշվետվությունների ձևեր, որոնցում արտացոլված տեղեկությունները Բյուրոյին ներկայացվում են Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից ապահովագրական ընկերություններին ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետներում: Ընդ որում, մեկանգամյա հաշվետվությունների ձևը սահմանելիս նույնպես հաշվի են առնվում սույն կանոնների 3-րդ կետում նշված՝ Միասնական տեղեկատվական համակարգից տվյալների ստացման ընթացիկ հնարավորությունները: (յրաց. է 26/10/2021թ թիվ 7-Լ)

